

## ԽՖՊԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՐԱՊՈՒ ՄԱՍՈՒՆՈՎՈՒԹՅՈՒՆ

«Նոր — Դար» լրագրի 59 համարում հաղորդած լուրից իմացալ, որ Նուխույ դպրոցաց հոգաբարձութիւնը նախագահութեամբ տեղւոյն յաջորդ Արժ. Գարեգին վարդապետի ժողով կազմելով որոշել է սուրբ Եղիշէի Առաքելոյ «Աւսումնասիրական» ընկերութեան անունով հաւաքած 1150 մանէթ դրամները ծախսել նոր կառուցանելի օրիորդական դպրոցի շինութեան վերայ:

Որպէս երբեմն Նուխույ յաջորդ և գործին մասնակից և տեղեակ ոք՝ հարկ եմ համարում «Աւսումնասիրական» ընկերութեան մասին մի քանի հարկաւոր տեղեկութիւններ հաղորդել «Հիմնադիր» անդամների փափագանաց համեմատ Հանգուցեալ Տէր Գէորգ Գ. Սաթուղիկոսը 1880 թուականի Մայիս ամսոյ 11 ն օրհնութեան կոնդակաւ հաստատեց այդ ընկերութիւնը: Առնակը ստանալուց յետոյ ընկերութեան «Հիմնադիր» անդամներին հետ զհետէ չորս անգամ ժողով հրաւիրեցի բայց բացի Նուխի քաղաքացի Պ. Պ. Սիմէօն Ահարօնեանցից, Դաւիթ Աթա-յեանցից, Յովհաննէս Բուլումեանցից և Երեանցի Յակօր Յարութիւնեանցից ո՛չ ոք ներկայացաւ ժողովին. վերջին ժողովին մեծապատիւ Ահարօնեանցն տեսնելով իւր համաքաղաքացւոց անտարբերութիւնը և սառնութիւնը, ասաց. քանի որ մեր պարոններն ընկերութեան վսեմութիւնը և ապագայ բարիքը չեն կարողանում հասկանալ, միթէ՞ կարելի է սոցանից յառաջագիմութիւն սպասել: Եւ որովհետեւ հարկաւոր թուով մարդիկ չըկային, ժողով չըկայացաւ, որով և անհնար եղաւ խորհրդարան կազմել: Բայց ես հաշիւները պահում էի և առանց վհատելու դարձեալ ամենայն կողմից ընկերութեան անունով նուէրներ էի հաւաքում:

Ստացած նուէրների համար շարունակ լինումէր եկեղեցւում ծանուցում և նուիրատուաց ննջեցելոց համար հոգեհանգիստ: Երբ իմ անձնական տկարութեանս պատճառով 1881 թուին հրաժարական մատուցի հանգուցեալ Հայրապետին, կողմնակի իմանալով բարեյիշատակ Հայրապետի հաճութիւնը, որ ի մօտոյ արձակելու է ինձ պաշտօնից, ընկերութեան պատկանեալ դրամներն, և առաջին խաղարկութեան վիգրիշնի ըրիւթն հետզհետէ առաջադրութեամբ յանձնեցի Նուխույ Հոգ. Սառավարութեան, Դեռ պաշտօնից չարձակուած՝ ընկերութեան հաշիւը պահելու համար 1881 թուականին Ապրիլի 1 ն յայտարարութեամբ խնդրեցի Վարաբաղու Առնսիստորից ժապաւինեալ տումար՝ յանուն Հոգեւոր Սառավարութեան Նուխույ, որ տումարի մէջ արձանագրելով ընկերութեան հաշիւները իւրաքանչիւր տարի ներկայացնէ ի ղննութիւն: Վերադարձած լինելով Ս. Էջմիածին՝ 1881 թուականի Մայիսի 29 յայտարարութեամբ խնդրեցի Վահագնաւ Հայրապետի անօրէնութիւնը յիշեալ ընկերութեան դրամների անկորուստ պահպա-

Նութեան համար, Նորին Վեհափառութիւնը յիշեալ յայտարարութեան վերայ բարեհաճեց մակագրել. «Յանձնեմք Սինօդի, և պատուիրեմք փութով տնօրինել, ապահովելով զգրամագ»: Սինօդն ևս յանուն Հոգեւոր Առաջարութեան Նուխոյ 1881 թ. Օգոստոսի 31 № 2287 գրումէ «Հրամանագրել Հոգեւոր Առաջարութեան Հայոց Նուխոյ փութանակի ստացեալ ի պարտապանաց զնուիրեալ գրամ յանուն «Ուսումնասիրական» ընկերութեան Նուխոյ՝ առաքել ի շահեցողութիւն ի հասարակական պրիկազն Տփլիսու, և զբիւլէթն պրիկազի ունել ի նմին ի պահպանութիւն ցայլ առանձին տնօրէնութիւն»: Արդ՝ վերյիշուած փաստերից հաստատ երեւումէ, որ ընկերութեան անունով հաւաքած գրամների գործադրութիւնը միայն հոգ. Ծայրագոյն իշխանութեան առանձին տնօրէնութեամբ պէտք է լինի: Յանկալի էր իմանալ թէ հոգաբարձուք, որ ժողով կազմելով վճռելէն յիշատակեալ ընկերութեան 1150 մանէթ գրամները ծախսել օրինորդական դպրոցի վերայ, արդեօք հոգ. Ծայրագոյն իշխանութեան հաճութիւնը ստացելէն. բացի այս՝ քանի որ հոգաբարձուաց իրաւանց սահմանը որոշուած է, իսկ յիշեալ ընկերութիւնը և նորա գրամները յատուկ նոցա իրաւանց չէ ենթարկվում, հոգաբարձութիւնը իրաւունք ունի՞ գործադրել ընկերութեան գրամները: Ի հարկէ հոգաբարձուք գիտեն, որ այլոց աշխատութեան տէր հանդիսանալ անհնարին է: Պ. հոգաբարձուք պէտք է գիտենան, որ օտար քաղաքացի «Հիմնաւոր և Մշտնջենաւոր» անդամներին չըպետքէ արհամարել նոցա որոշ նպատակով արած նուերարերութիւնը հակառակ նոցա կամաց, ուրիշ բանի ծառայացնելով. այն օտար քաղաքացի նուիրատուք, որ իմ հրաւերին անսալով՝ այժմ ինձ պատասխանատու կըհամարեն: Մանաւանդ պարոնայք Ագուլեցի Ատեփաննոս Մանուչարեանց և Գանձակեցի Աւետիս Կիրակոսեանց, որոնք ըստ իմ խնդրանաց Նուխում գտնուող օտարական վաճառականներից փոքր միջոցում հաւաքեցին ընկերութեան անունով միանուագ 450 մանէթ նուէրներ:

Թող պ. հոգաբարձուք վեր առնեն ընկերութեան ցուցակը, որը գտնուումէ Նուխոյ հոգ. Առաջարութեան մէջ, և նայեն թէ իրանք բուն Նուխեցիք որքան նուէր են տուել, որ այժմ առանց օտարական անդամների հաճութեան և առանց Սինօդի թոյլատուութեան ձեռնաձուխ են լինում ընկերութեան գրամոց: Ընկերութեան նպաստողներն են զխաւորապէս Հուլեցի Գանձակեցի և Ագուլեցի վաճառականները, որոնք լսելով հոգաբարձութեան միջամտութիւնը ընկերութեան գործին՝ բնական է որ դժգոհ կըմնան: —

Ս. Սինօդի հրամանաւ ընկերութեան հաշիւներն կարգաւորութեան մէջ պահելու համար կարգուած է խորհրդարան և նախագահ, նախագահ. պ. Յակոբ Տէր Խաչատրեանցն, որ իւր ձեռքն ունի ընկերութեան գրամոց սակաւ մասն շահեցնելու համար, կըհամաձայնի՞ արդեօք այդ

դրամներն յանձնելու Հոգաբարձութեան, և եթէ համաձայնի՝ օտար քաղաքացի « Հիմնադիր և Մշտնջենաւոր » անդամների, (որոց մին լինելու պատիւն ունիմ) իրաւացի զայրոյթը չի՞ շարժիլ:

Հրապարակաւ խոստովանումեմ, որ պ. Յակոբ Տէր Խաչատրեանցն ընկերութեան գործի մէջ ինձ հետ առաջին աշխատողն, և ինձ յուսադրողն էր: Ընկերութեան անունով դրամներ հաւաքելու ժամանակին՝ նա էր ինձ հետ անտանելի արգելմունքների հանդիպում: Երբ ընկերութեան դրամներն հասան 800 մանէթի, իմ ժամանակի հոգաբարձուք ևս քանի քանի անգամ ժողովեցին ստանալ ընկերութեան դրամները ուսումնարանի վիճակը բարւոքելու համար. իսկ Պ. Տէր Խաչատրեանը հակառակն էր պնդում Հոգաբարձութեան, ասելով որ, օտար քաղաքներից եկած դրամները յայտնի նպատակ ունին և անշուշտ պէտք է իւր նպատակին ծառայացնել: Յուսով ենք՝ որ պ. Տէր Խաչատրեանցն բարեմիտ անձն լինելով, դարձեալ նոյն համոզմանը հաստատ կրմնայ, մեր հեռաւոր անդամոցս իրաւանցը ջատագով հանդիսանալով, եթէ հարկը պահանջէ, երկրորդ անգամ առաւել մանրամասն և հանգամանօրէն կըխօսեմ:

Միաբան Ս. Էջմիածնի Գրիգորիս Վարդապետ

## ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ.

Շնորհակալութեամբ ստացանք

Ա. Հ. Խորէն Ծ. Վարդապետ Ստեփանէի խմբագրութեամբ հրատարակուող Մանկավարժանոց ամսատետրակի 1 համարը:

Բովանդակութիւնն է, 1. Մանկավարժանոց և մանկավարժական ուսման անհրաժեշտ կարեւորութիւն: 2. Ազգային լուսաւորութիւն փրանսիայում. 3. դպրոցներ զարգարելու, դպրոցական պատկերի և առհասարակ աշակերտների ճաշակը զարգացնելու մասին: 4. Առաջ (բանաստեղծ.), 5 Շարժական Մատենագարան. 6 Իրախօսութիւն փորձնական դաս բեմական դպրոցում. 7. Յիշատակարան. 8. Ծանուցմունք՝ կազմի 3. և 4 երես:

Ամսաթերթը հրատարակուած է Մարտ ամսին, իսկ Յունվար և Փետրվար ամիսների համար բաժանորդներին ուղարկուած է « Համակենսորոնական պրոգրամներ » վերնագրով խմբագրի աշխատասիրած և հրատարակած գրքոյկը:

Բ. Ժամանակաւոր ընդհատումից յետոյ ստացանք Վարժարան մանկավարժական ամսագրի 3. համարը Փետրվար ամսին:

Ստացանք նաեւ « Կաթուղիկոսական Ընտրելիներ » վերնագրով մի բրոշիւր, հրատարակութիւն Արմենակ Սիւնիի:

Պ. Արմենակ Սիւնին ընդհանրապէս խօսելով մի կաթուղիկոսացուից պահանջուած կատարելութեանց մասին՝ անցնումէ ընտրելիների հա-